

Որքան մեծ էր գուրթ Քահանայապետին ընդ թագաւորս մեր եւ յոյս նիզակակցութեան սորին ընդ Խաչակիրս, որոց՝ յայնժամ եւ յետոյ (1203) խոստանայր Լեւոն տալ գունդ օգնականի երկուց բիրուց զօրաց, այնքան եւ անդուլ անհաշտ մախանք կոմսին Տրիպօլսի՝ խափան լինէին մեծագոյն օգտի քրիստոնէից երկոցուն եւս կողմանց, արեւմտեայցն եւ Հայոցս, եւ նորանոր պղտորմանց եւ վրդովմանց պատճառք: Քանզի ամենայն հնարիւք եւ բանսարկութեամբ ջանայր նա՝ ոչ միայն քակտել ՚ի Լեւոնէ զնիզակակիցսն, եւ դարձեալ յարուցանել ՚ի վերայ նորա զայլազգիս, այլ եւ զիւր իսկ զհայրն, ասեն, որ եւ զառանցեալ թուի մտօք, ստապատիր բանիւք ուժացոյց ՚ի Լեւոնէ եւ գթեցոյց ՚ի կամս իւր¹³⁴: Հրապուրէր եւ զիշխանսն եկեալս յարեւելս ՚ի խաչակրութիւն՝ ընդդէմ Լեւոնի, ընդ որս յիշին յանուանէ Հռեգինալդ կամ Հռենալդ որ եւ Ռենար ըստ Փռանկաց (Renard comte de Dampierre) կոմս Տամբիէրի, եւ Յովիան կոմս Նիգելլայ (Nigellas). այլ սա հարեալ ՚ի տենդէ՝ մեռաւ յերկրի անդ¹³⁵: Իսկ առաջինն՝ 80 ձիաւորօք եւ այլովք օգնականօք յախտուն դիմելով, հարաւ յայլազգեաց ՚ի սահմանս Լաւողիկեայ, եւ ձերբակալ եղեալ վարեցաւ ՚ի Բերիա, ուր եւ զամս երեսուն արգելեալ ՚ի գերութեան, անագան ուրեմն դարձաւ յերկիր իւր¹³⁶: Ապա յինքն կրթեաց կոմսն զՏաճարական ասպետս, զորս որսացեալ էր Լեւոնի՝ տալով նոցա կալուածս ինչ երկրի իւրում 30,000 ոսկի բիզանդաց արժէիւք. վասն այնորիկ եւ օգնական եղեն նմա ՚ի վանել զկոմսն եւ դարձուցանել զհայր նորա յաթոռն. իսկ այժմ հրապուրեալք ՚ի նմանէ՝ ինդրէին ՚ի Լեւոնէ եւ զհին կալուած իւրեանց՝ զԿասդիմ բերդ, զոր՝ զիտէր կոմսն եթէ ոչ առնու յանձն Լեւոն հանել ՚ի ձեռաց, իբրու կարելոր ամրոց սահմանակալ Անտիոքայ: Իսկ Լեւոնի ոչ ունելով կասկած զոտցանէ, պատրաստէր յարձակիլ՝ ՚ի վերայ Իկոնիացոց՝ յամսեան յուլիսի (1201), մինչդեռ յերկպառակութեան էին սուլտանն եւ որդիք նորա. հրաւիրեաց եւ զՏաճարականսն ՚ի նիզակակցութիւն. եւ իբրեւ եկին սոքա փութով յԱնտիոք, ընդ առաջ ել նոցա Լեւոն պատուասիրել իմն կամելով. այլ յապուշ կրթեցաւ, յորժամ փոխանակ օգնականութեանն՝ մատուցին նմա թուղթ մի ՚ի Քահանայապետէն (անթուական). որով ծանուցանէր սա՝

¹³⁴ Թուղթք Գ Իննովկ. Ե, ԽԲ,– Հուրդէր, Գ:

¹³⁵ Այս դէպք յետոյ ուրեմն եղեն յամի 1203, յելս ամսեան մայիսի եւ ՚ի սկիզբն յունիսի:

¹³⁶ Բիզոպոսի, առ Մուրադորեայ. Ricaldi.